ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 փետրվարի 2012թ. թիվ 48

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածի պահանջի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. 2012թ. Լոռու մարզի համայնքներում վարչական հսկողության իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

Աշխատանքային ծրագրով նախատեսված համայնքներում իրականացվող հսկողության ընթացքում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2012թ. հունվարի 30-ի “Հայաստանի Հանրապետության մարզպետների կոմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին” թիվ 02-Ն հրամանով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. փետրվարի 13
ք.Վանաձոր